ԿԱՐԾԻՔ

11.04.2023թ.-ին ՀՀ ԱԺ նստաշրջանի օրակարգ ընդգրկված և 13.04.2023թ.-ին առաջին ընթերցմամբ ընդունված[1] «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի[2] (Կ-517-21.02.2023-պի-011/0) վերաբերյալ

Առաջարկվող նախագծով նախատեսվում է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող կարգապահական հանձնաժողովի ստեղծում և այլ հարակից հարցերի կարգավորում: Սույնով ներկայացնում ենք «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության դիտարկումներն ու առաջարկությունները քննարկվող նախագծի վերաբերյալ:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննությունն իրականացվելու է կարգապահական հանձնաժողովի կողմից:

Այսպես, ըստ նախագծի 3-րդ հոդվածի կարգավորումների՝ «Կարգապահական հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից: Հանձնաժողովի կազմում են հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող մեկ քննիչ, մեկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող, ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված մեկ դատախազ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված մեկ ներկայացուցիչ, մեկ իրավաբան-գիտնական, Վարչապետի առաջարկությամբ ներկայացված հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի 2 ներկայացուցիչ (…)»:

Չնայած նախագծի առաջին ընթերցման շրջանակներում հիմնական զեկուցողի այն պնդմանը, որ ստեղծվելիք կարգապահական հանձնաժողովը լինելու է ներառական[3], գտնում ենք, որ այն թերի է քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչների ներգրավման առումով: Մասնավորապես, **նախագիծը դրույթներ չի պարունակում ինչպես կարգապահական հանձնաժողովի կազմում քաղաքացիական հասարակության կառույցների (ՔՀԿ) ներկայացուցչի անդամակցության, այնպես էլ կարգապահական հանձնաժողովի աշխատանքներին դիտորդի կարգավիճակով ՔՀԿ ներկայացուցչի մասնակցության վերաբերյալ,** ինչը հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության սկզբունքների, մասնավորապես՝ հրապարակայնության սկզբունքի խախտում է և քաղաքացիական վերահսկողության տեսանկյունից՝ խոչընդոտ:

Գտնում ենք, որ կարգապահական հանձնաժողովի կազմում ՔՀԿ ներկայացուցիչների անդամակցություն չնախատեսելը չունի որևէ օբյեկտիվ և համոզիչ հիմնավորում, քանզի

---

[1] http://www.parliament.am/register.php?ID=679#r10607

[2] http://www.parliament.am/draft_history.php?id=14118&lang=arm

[3] https://www.youtube.com/watch?v=0gNLehFzuyg, տե՛ս 1:28:30 րոպեից

անգամ նախաքննական գաղտնիքի նկատառումներից ելնելով, **հնարավոր է գործընթացների կազմակերպում, որոնք կապահովեն կարգապահական հանձնաժողովի կազմում ՔՀԿ ներկայացուցիչների ներգրավման երաշխիքները, ինչպես օրինակ՝ գաղտնիության համաձայնագրի կնքումը, ՔՀԿ ներկայացուցչի ընտրության կարգի սահմանումը և այլն:**

Անհրաժեշտ է շեշտել, որ օրինակ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ ներգրավված են ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում[4], որոնց ներկայացվող հիմնական պահանջը միայն «առնվազն երեք ամսվա գործունեություն ունենալն է»: ՀՀ ոստիկանության Կարգապահական հանձնաժողովի 11 անդամներից 5-ը հասարակական միավորումների ներկայացուցիչներ են[5]: ՀՀ ոստիկանությունը ևս հանդիսանում է հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարող կառույց, սակայն այդ հանգամանքը, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով հետաքննության կատարումը, խոչընդոտ չեն հանդիսանում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման համար:

Կարգապահական հանձնաժողովում ՔՀԿ ներկայացուցչի անդամակցության նախատեսումից զատ, գտնում ենք, որ անհրաժեշտ է ապահովել նաև դիտորդների մասնակցությունը Հանձնաժողովի նիստերին՝ վերը նշվածին նույնանման երաշխիքների նախատեսմամբ: Ինքնին քրեական վարույթներով նախաքննական գաղտնիքի առկայության մատնանշումը, կարգապահական հանձնաժողովի նիստերի դռնփակ լինելը չեն կարող հիմք լինել դիտորդների մասնակցությունը բացառելու համար:

Նախագծով սահմանված չեն նաև կարգապահական հանձնաժողովի անդամներին, այդ թվում՝ իրավաբան-գիտնականին ներկայացվող պահանջներին և ընտրության կարգին վերաբերող դրույթներ:

Նախագծում անհրաժեշտ է որպես հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք նախատեսել նաև մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների խախտումները, հաշվի առնելով, որ գործող «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը սահմանափակվում են միայն հետևյալով.

1. կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները խախտելը.
2. իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

---

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175839, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=106054, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80623

[5] Տե՛ս 2023 թ.-ին ՀՀ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկված հասարակական միավորումների ցանկը՝ https://www.police.am/news/view/%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6010323.html ,

3. աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը[6].
4. օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության կամ շահերի բախմանն առնչվող պահանջները չպահպանելը.
5. առաքինության ստուգման բացասական արդյունքները:

Ներկայումս, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով չեն սահմանվում ծառայողական քննության փուլերը[7], ինչպես նաև չի սահմանվում ծառայողական քննության գործառույթն իրականացնող ծառայողների կամ վարչությունների շրջանակը, մինչդեռ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունից հետևում է, որ այդ գործառույթը, մասնավորապես՝ նախնական ուսումնասիրությունը, իրականացնում է կոմիտեի ներքին անվտանգության վարչությունը: Նախագծի 2-րդ հոդվածով այս հարցը մասնակի կարգավորում է ստանում, նախատեսելով, որ «Սույն օրենքով սահմանված հիմքերով հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որի փուլերն են՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ», սակայն **նախագծում ծառայողական քննության նախնական ուսումնասիրության փուլի վերաբերյալ այլ կարգավորումներ նախատեսված չեն, մինչդեռ ծառայողական քննության մյուս՝ կարգապահական վարույթի փուլի վերաբերյալ առկա են կարգավորումներ՝** կապված վարույթի հարուցման ժամկետների, վարույթի տևողության, վարույթի հարուցման հետաձգման, հարուցված վարույթի կասեցման, հարուցված վարույթի շրջանակներում Կոմիտեի ծառայողի իրավունքների և պարտականությունների հետ: **Նման պայմաններում ծառայողական քննության առաջին փուլին՝ նախնական ուսումնասիրությանն առնչվող իրավակարգավորումները, այդ թվում՝ նախնական ուսումնասիրության փուլում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի ընթացակարգային իրավունքներն և պարտականությունները ևս պետք է ամրագրվեն օրենքով, ոչ թե կոմիտեի նախագահի հրամանով[8]:**

Նախագծում հստակ սահմանազատված և արտացոլված չեն նաև հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առանձին փուլերի ժամկետները: Մասնավորապես, Նախագծի 2-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «Կարգապահական վարույթը հարուցվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերն ի հայտ գալուց հետո 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան կարգապահական խախտում կատարելու օրվանից 12 ամիս հետո»: Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝

---

[6] Տե՛ս Կոմիտեի նախագահի 2022թ.-ի փետրվարի 4-ի N 02-Լ հրամանը «Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին»

[7] 2022թ.-ի սեպտեմբերի 7-ին շրջանառության մեջ դրված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծով տարանջատվում են ծառայողական քննության փուլերը՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ:

[8] Ըստ նախագծի՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը՝ ներառյալ Կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը կարգապահական հանձնաժողովի ներկայացմամբ սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

«Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող գերազանցել 1 ամիսը, բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերի: Այդ դեպքերում կարգապահական վարույթի տևողությունը կարող է երկարաձգվել հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բացակայության ժամանակահատվածով»: Նույն հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ «Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանը»:

Այսպես, որոշակի բացառություններից զատ, ընդհանուր առմամբ, նախագծով ուրվագծում են հետևյալ ժամկետները. հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի, ինչպես նաև դատախազի՝ օրենքով սահմանված կարգով ներկայացված ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդության, ինչպես նաև ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, զանգվածային լրատվության միջոցների **հրապարակումների հիման վրա՝ 30-օրյա ժամկետում հարուցվում է կարգապահական վարույթ:** Այստեղ, անհստակ է նախնական ուսումնասիրության ժամկետը և տևողությունը, որը պետք է նախորդեր կարգապահական վարույթի հարուցմանը: **Միաժամանակ, կարգավորված և հստակեցված չեն նշված 30-օրյա ժամկետում կարգապահական վարույթ չհարուցելու հետևանքները և ընթացակարգերը:** Նշված՝ 30-օրյա ժամկետում **հարուցված կարգապահական վարույթի տևողությունը չի կարող գերազանցել 1 ամիսը:** Այնուհետև, ծառայողական քննության արդյունքների հիման վրա, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել **կարգապահական տույժեր՝ խախտումը հայտնաբերելու օրվանից 6 ամսվա ընթացքում:** Կարգապահական տույժի նշանակման ժամկետն օրենքը պայմանավորել է խախտումը հայտնաբերելու օրով[9], հաշվի չառնելով այն հանգամանքը, որ փաստացի, նախագծով առկա կարգավորումների համաձայն՝ խախտումը հայտնաբերելուց հետո, Կոմիտեի ծառայողի բացակայություններով պայմանավորված ծառայողական քննությունը կարող է ձգձգվել մինչև վեց ամիս և ավելին, և ծառայողը, փաստացի չի ենթարկվի կարգապահական տույժի՝ այդ հիմքով: Այստեղ առկա է անպատժելիության վտանգ, որը հնարավոր է կանխարգելել **կոմիտեի ծառայողի հարգելի բացակայության հստակ իրավիճակներ նախատեսելով և այդ ժամկետը՝ հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանի նման ընդհանուր ժամկետներում չհաշվելով, ինչպես նաև կարգապահական տույժի նշանակման ժամկետը 6 ամսվա փոխարեն առնվազն 12 ամիս նախատեսելով:**

Ինչպես նշեցինք, անհրաժեշտ է հստակեցնել և մանրամասնել «Կոմիտեի ծառայողի բացակայության դեպքեր» արտահայտությունը, որն ամրագրված է Նախագծի 2-րդ հոդվածի

[9] Ըստ նախագծի՝ կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանը:

9-րդ կետում: Մասնավորապես, ըստ նշված դրույթի՝ «Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող գերազանցել 1 ամիսը, բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերի: Այդ դեպքերում կարգապահական վարույթի տևողությունը կարող է երկարաձգվել հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բացակայության ժամանակահատվածով»: Նշված դրույթում նախատեսված չեն բացակայության հարգելի դեպքերը և դրանց շրջանակը, մինչդեռ նույն հոդվածի մեկ այլ՝ 14-րդ կետում բացառությունները պայմանավորվել են հստակ իրավիճակներով՝ հիվանդություն կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջան: 14-րդ կետում նշված ցանկը անհրաժեշտ է լրացնել (օրինակ՝ գործուղում) և հստակ ամրագրել նաև Նախագծի 2-րդ հոդվածի 9-րդ կետում՝ բացակայության դեպքեր եզրույթի ներքո:

Հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի գործունեության հրապարակայնության և թափանցիկության նկատառումներից ելնելով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոմիտեի կողմից իր պաշտոնական կայքում, ինչպես նաև կոմիտեի տարեկան և կիսամյակային հաշվետվություններում կամ նորություններում կարգապահական վարույթների և տույժերի վերաբերյալ կոմիտեի նախագահի որևէ որոշում, կամ ընդհանուր բնույթի տեղեկատվություն փաստացի չի հրապարակվում և կոմիտեի քննիչների նկատմամբ ծառայողական քննությունների և կարգապահական պատասխանատվության մասին տեղեկատվություն փաստացի հնարավոր է ձեռք բերել միայն տեղեկատվության հարցումների արդյունքում[10], գտնում ենք, որ **կարգապահական հանձնաժողովի որոշումները և ծառայողական քննությունների վերաբերյալ տեղեկությունները պետք է ներկայացվեն հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային և տարեկան հաշվետվություններում, ինչպես նաև ընթացիկ հրապարակվեն կոմիտեի պաշտոնական կայքում:** Այս առումով նշենք, որ օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեն պարբերապար հրապարակում է իր կարգապահական հանձնաժողովի որոշումները՝ ժողովածուների տեսքով[11], իսկ ՀՀ ՊԵԿ-ը հրապարակում է տվյալներ հարկային և մաքսային ծառայողների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ՝ նորությունների տեսքով[12] և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք՝ օրենքի նախագծում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

---

10 Օրինակ՝ ԻՊԱՍ 23.10.22թ.-ի հարցմանն ի պատասխան Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից 21.10.22թ.-ին տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2021թ.-ի հոկտեմբերի 23-ից մինչև 2022թ.-ի հոկտեմբերի 21-ը Կոմիտեի քննիչների նկատմամբ իրականացվել է 21 ծառայողական քննություն, որոնցից 20-ը՝ դատախազների միջնորդությունների հիման վրա: 20 ծառայողական քննություն ավարտվել է քննիչների արարքում կարգապահական պատասխանատվության համար հիմք հանդիսացող գործողությունների բացակայության հանգամանքով, 1-ն՝ արարքն առաջին անգամ կատարելու և անկեղծորեն զղջալու հիմքով:

11 https://www.investigative.am/qualification-and-disciplinary-commission/disciplinary-commission/documents-disciplinary-commission.html

12 https://www.petekamutner.am/mdNews.aspx?ntname=mdOfficialNews&nid=4532, https://www.petekamutner.am/mdNews.aspx?ntname=mdOfficialNews&nid=4339, https://www.petekamutner.am/mdNews.aspx?ntname=mdOfficialNews&nid=1579

- Հակակոռուպցիոն կոմիտեի Կարգապահական հանձնաժողովում նախատեսել նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների անդամակցությունը:
- Ապահովել Կարգապահական հանձնաժողովի աշխատանքներին դիտորդների ներկայության հնարավորությունը:
- Նախատեսել Կարգապահական հանձնաժողովի անդամներին, այդ թվում՝ իրավաբան-գիտնականին ներկայացվող պահանջներին և ընտրության կարգին վերաբերող դրույթներ:
- Որպես Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք նախատեսել նաև մարդու իրավունքների և դատավարական երաշխիքների խախտումները:
- Ծառայողական քննության առաջին փուլին՝ նախնական ուսումնասիրությանն առնչվող իրավակարգավորումները, այդ թվում՝ նախնական ուսումնասիրության փուլում Կոմիտեի ծառայողի ընթացակարգային իրավունքներն և պարտականությունները սահմանել օրենքով, ոչ թե Կոմիտեի նախագահի հրամանով:
- Հստակ սահմանազատել և արտացոլել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առանձին փուլերի ժամկետները:
- Նախատեսել սահմանված 30-օրյա ժամկետում կարգապահական վարույթ չհարուցելու հետևանքներն և ընթացակարգային հարցերը:
- Հստակեցնել և մանրամասնել «Կոմիտեի ծառայողի բացակայության դեպքեր» արտահայտությունը, որն ամրագրված է Նախագծի 2-րդ հոդվածի 9-րդ կետում: Լրացնել նաև նույն հոդվածի 14-րդ կետով սահմանված ցանկը (օրինակ՝ ավելացնել գործուղումը):
- Կարգապահական տույժի նշանակման ժամկետը խախտումը հայտնաբերելու օրվանից 6 ամսվա փոխարեն սահմանել առնվազն 12 ամիս, միաժամանակ նախորդ կետում նշված՝ կոմիտեի ծառայողի բացակայության դեպքերը/ժամանակահատվածը՝ հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանի նման չհաշվելով ընդհանուր ժամկետներում:
- Ապահովել ծառայողական քննությունների վերաբերյալ Կարգապահական հանձնաժողովի որոշումների հրապարակայնությունը՝ հրապարակելով դրանք Կոմիտեի պաշտոնական կայքում: Ծառայողական քննությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնել հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային և տարեկան հաշվետվություններում: